ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2012 թ. թիվ 10/1688/

16. ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի ԶՏԱ-2.6 աստղադիտակի վերանորոգման և արդիականացման աշխատանքները կազմակերպելու մասին

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի ԶՏԱ-2.6 աստղադիտակի վերանորոգման և արդիականացման աշխատանքների կազմակերպման նպատակով, ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշեց.

1.ՎՈՒԱԶ-2.6Բ վակումային կայանքի առկա վիճակը գնահատելու և դրա վերաշահագործման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացման նպատակով համապատասխան մասնագետ հրավիրել Ղրիմի աստղադիտարանից: Հրավիրված մասնագետի հրավերքի հետ կապված բոլոր ծախսերը փոխհատուցել ՀՀ ԳԱԱ հաշվին:

2. Որպես ՎՈՒԱԶ-2.6Բ վակումային կայանքի առկա գույք համարել ՀՀ ԳԱԱ նախագահի 06.04.2012թ. թիվ 29 կարգադրության հիման վրա գույքագրված սարքերն ու նյութերը:

3. Հանձնարարել Բյուրականի աստղադիտարանին աշխատանքային պայմաններ ապահովել ՎՈՒԱԶ-2.6Բ վակումային կայանքի արտադրամասում հրավիրված մասնագետի աշխատանքի իրականացման համար:

4. Հանձնարարել Բյուրականի աստղադիտարանին աշխատանքային խումբ ստեղծել հրավիրված մասնագետի հետ համատեղ ՎՈՒԱԶ-2.6Բ վակումային կայանքի վերաբերյալ դեֆեկտային ակտ պատրաստելու և կայանքի վերաշահագործման ծախսերի նախահաշիվ կազմելու նպատակով:

5. Վերականգնողական աշխատանքները հանձնարարել ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի կազմում գտնվող “Գալակտիկա”ՓԲԸ-ին, որն աստղադիտական հայելիներ արտադրող միակ մասնագիտացած

կազմակերպությունն է հանրապետությունում և այդ բնագավառում ունի նաև միջազգային պատվերների կատարման փորձ:

Հանձնարարել ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանին և “Գալակտիկա” ՓԲԸ-ին համապատասխան ֆինանսների առկայության դեպքում պայմանգիր կնքել այդ աշխատանքներն իրականցնելու համար:

6. Աստղադիտակի վերանորոգման և արդիականացման աշխատանքների վերահսկողությունը ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից դնել ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և սատղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու.Չիլինգարյանի վրա:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ